

**ԿՐԻԿՐԱՅՈՒՄ ՎԵՐԱԿԵՐՏՎԱԾ ՀԱՅՈՑ ՔԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ**

**Հ. Մ. ԱՐԵԱՄՅԱՆ**

Պատմագրության մեջ Լևոն Բ-ի գահի, Կիլիկիայում վերակերտված Հայոց թագավորության համազգային իրավասության և «Թագաւոր ամենայն Հայոց» տիտղոսի մեկնաբանման շուրջ կան տարբեր կարծիքներ: Սակայն նշենք, որ ուսումնասիրողներից ոչ մեկը իր առջև նպատակ չի դրել հանգամանորեն քննել այդ կարևոր հարցը:

Ղ. Ալիշանը գտնում է, որ «Թագաւոր ամենայն Հայոց» տիտղոսով Կիլիկիայի թագավորները գուցե հիշվում էին եկեղեցական ազոթքներում, զուգակշռվելով «Ամենայն Հայոց» տիտղոսի հետ, հատուկ շուք տալով Կիլիկիայի Հայոց թագավորի իշխանությանը: Միաժամանակ մեծավաստակ գիտնականը կարծում է, որ Կիլիկյան Հայաստանի թագավորներն իրավունք չունեին «Ամենայն Հայոց» կոչվել, քանի որ Մայր Հայաստանը գտնվում էր օտարերկրյա տիրապետության տակ, և նրա իրավասությունները գուցե ճանաչում էին Կիպրոս կղզու և Միջերկրական ծովի արևելյան ափամերձ շրջաններում (Ծրուսաղեմ, Քարաք, Սիդոն, Տյուրոս, Անտիոք և այլն) բնակվող հայերը<sup>1</sup>:

Մ. Օրմանյանը այդ մասին գրում է. «Լեւոն ինքն ալ ինքզինքը՝ Թագաւոր Ամենայն Հայոց կը կոչէ, եւ այս կերպով Հայաստանի և Փոքր Ասիոյ Հայերն ալ; որ Կիլիկիա եղողներէն շատ աւելի էին, իրեն հպատակ կը կարծէ: Լեւոնին հին նպատակն էր այս, երբ Արեւելիներն ալ իրմէ ուժացնել չէր ուզեր...»<sup>2</sup>:

Կ. Միքայելյանը, հպանցիկ անդրադառնալով այդ հարցին, գրում է. «Միաժամանակ պետք է նշել, որ Լևոն Բ-ի թագադրությունը ժամանակակիցները՝ XIII դարի կեսի հայ պատմիչները զնահատել են որպես հայկական թագավորության վերականգնում, որպես հայերի պատմության մեջ խոշոր իրադարձություն»<sup>3</sup>:

Ս. Բոռնազյանը, փաստորեն, կրկնում է Ղ. Ալիշանին և գրում, որ «Ամենայն Հայոց» տերմինն օգտագործելով Կիլիկիայի թագավորները հանդես են եկել ոչ թե ամբողջ Հայաստանի սյուզերեն թագավոր, այլ նպատակ են ունեցել ներկայացնել Միջերկրական ծովի արևելյան ափերին XI—XIV դարերում բնակվող հայերին<sup>4</sup>:

Ինչպիսիք շանտեսելով վերոհիշյալ գիտնականների կարծիքները՝ այժմ փոր-

<sup>1</sup> Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 482:

<sup>2</sup> Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, Պէյրուս, 1959, § 1066:

<sup>3</sup> Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, стр. 156.

<sup>4</sup> Ս. Բոռնազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում XI—XIV դարերում, Երևան, 1973, էջ 54:

ձեռք XII—XIII դարերի սկզբնաղբյուրների հիման վրա պարզաբանել Կիլիկիայում և Լևոն Բ-ի վերակերտած Հայոց թագավորության համազգային իրավասության հարցը:

Մերտո Սպարապետը Լևոն Բ-ի թագադրության մասին գրում է. «Ի թուին Ուել (647=1198) յամսեանն յունուարի, յօր Յայտնութեան Տեառն, օծին ղԼեոն թագաւոր Հայոց ի հնազանդութիւն եկեղեցւոյն Հոռմայ և ըմբրուրին Ալամնաց. և եղև ուրախութիւն մեծ ազգիս Հայոց, զի տեսին վերստին կանգնեալ և նորոգեալ գտերութիւն իւրեանց յերեսս Լեոնի բարեբարոյ և աստուածասէր արքայի (ընդգծումը մերն է— Շ. Ա.)»<sup>5</sup>:

Իսկ Սամվել Անեցին գրում է. «Ի Ուել թվին օծեալ եղև թագաւոր Հայոց Լևոն՝ թագաւորելով ի վերայ տանս Թորգոմայ՝ ամս ԻԲ, առաքելով նմա թագ երկուց կայսերացն՝ Յունաց և Ֆոանգաց, որով օծեալ եղև ի կաթոցիկոսէն Հայոց տէր Գրիգորէ թագաւոր...»<sup>6</sup>, ապա ավելացնում. «Տեառն... գրացեալ ի մեզ, կանգնելով վերստին զանկեալս և զկործանեալս. յարուցանել կամեցաւ ողորմածն, որ յարոյց մեզ քազաւոր յազգէ մերմէ՝ ղԼևոն որդի Ստեփանէի՝ այր բարեպաշտ և քրիստոսասէր. քաջ և արի ի պատերազմի... (ընդգծումը մերն է— Շ. Ա.)»<sup>7</sup>:

Միխայել Ասորու երկի հայերեն թարգմանությունը ավելի ճոխ է ներկայացնում այդ իրադարձությունը. «...փութային պատուել զնա թագիւ. թագաւորն Յունաց վասն պատճառին՝ զի թերևս հնար լիցի նովաւ յաղթել Թուրքացն որ բռնացեալ կալան զիշխանութիւն նորա, իսկ թագաւորն Փոանգաց վասն դաշանց սիրոյն զոր ունէին ընդ Հայք ուխտիւք ի հին ժամանակաց. և վասն այսօրիկ երկոքին առաքեցին նմա թագ ոսկիակազմ, և պսակեցին զնա յաղթութեան սյակաւն՝ ըստ վայելման և պատշաճի արժանատրութեան իւրում: Եւ յայսպէս վերստին նորոգեցաւ քազակալութիւն Արամեան զաւակին. և թագն Հայկազանց և Սենեբերիմանց եղաւ ի զլուխ արժանաժառանգ զարմին Լեոնի ի Ուել (645) թուին Հայոց... (ընդգծումը մերն է— Շ. Ա.)»<sup>8</sup>:

Հակոբ վարդապետը, որը 1198 թ. ուղեկցել է Վանտոսպի արքեպիսկոպոս Ստեփանոս Տիրացուին Հոռմկլայից դեպի Սիս և Տարսոն, Լևոն Բ-ի թագադրության մասին գրում է. «Այլ ճանապարհ առաջի եղաւ իմում Տեառնս և կաթողիկոսին Հայոց. զի կոչեցեալ եղեն ի Լեովնէ, որ այժմ զվաղնջուցն ի մերմէ ազգէ և զընկեցեալն յերեսաց տեսողին՝ զթագաւորական անուն՝ զոր ունէին Հայք, սա միայն ստացաւ զօգոստոսական և ծիրանափայլ պատմուճան և ընկալաւ օծումն՝ որպէս զմեծն Տրդատ. կամակցութեամբ արիական ազգին Յունաց, բերեալ նմա նշան զխաչանիշ թագն... (ընդգծումը մերն է— Շ. Ա.)»<sup>9</sup>:

Սամվել Սկևռացին Կիլիկիայում Հայոց թագավորության հռչակման մասին գրում է. «...զի նախնական զարմ թագաւորիս մերոց ի վերջին ժամանակս աւուրց աստուածային օրհնութեամբ ծաղկեալ զխափանեալ ի վաղուց քազաւորութիւնն Հայոց նորոգեցին... (ընդգծումը մերն է— Շ. Ա.)»<sup>10</sup>, ապա ավելացնում է. «...Լևոն միս որդին Ստեֆանէի և եղբայրն Ռուբէնի՝ տիրեաց մեծայաղթութեամբ, որ ընդ բազումս նուաճեաց ազգիս և աշխարհս զմերս ընդարձակելով. և ըստ նախնի պսակաւորացն մերոց Հրաչէին և Պարուլրի,

<sup>5</sup> Մերտո Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 208:

<sup>6</sup> Սամուել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 144:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 145:

<sup>8</sup> Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1871, էջ 504:

<sup>9</sup> Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 442:

<sup>10</sup> Սամվել Սկևռացի, Պատմութիւն վարուց ներսեփ եպիսկոպոսի, տե՛ս Սամուել Անեցի, Եջվ. աշխ., էջ 237—238:

կամօք քաղցրութեանն Աստուծոյ բարձրացեալ յերկուց կայսերացն ընկալեալ թագ նորոգեաց զխափանեալ արոռ և արժունիս թագաւորութեան մերոյ... (ընդգծումը մերն է— Շ. Ա.)»<sup>11</sup>:

Փաստորեն, վերոհիշյալ պատմագիրները 1198 թ. Կիլիկիայում հռչակված թագավորութիւնը դիտում են Հայոց հնավանդ թագավորութեան վերակերտում և այն զնահատում որպէս Հայոց պատմութեան կարևորագույն իրադարձութիւն: Նրանք լեոն Բ Մեծագործին համեմատում են Պարուրի, Հրաչեի և Տրդատ Գ Մեծի հետ: Ավելին, լեոն Բ-ի ժամանակակից քաղաքական, ապա եկեղեցական գործիչ Հեթում-Հեղի Համբրոնացին «Ժամանակագրութիւն կայսերաց Հռովմայ» երկի թարգմանութեան մեջ բերում է նորապսակ արքայի ամբողջական տիտղոսը. «Սա (Հայերի Զ-ը—Շ. Ա.)՝ յեթներորդ ամի թագաւորութեան իւրոյ՝ պատուեաց զԼեոն որդի Ստեֆանէի յԻսաւրինեանց՝ թագիւ, զկնի փառաւոր արծվեաքին Միանցին և հաստատեաց թագաւոր ամենայն Հայոց, և նահանգին Կիլիկէացոց և Իսաւրիայ. սա նորոգեաց զթագաւորութիւնն Հայոց զբազում ամաց եղծեալն, ի թուին Ռեզ (ընդգծումը մերն է— Շ. Ա.)»<sup>12</sup>:

Վերոհիշյալից պարզորոշութեամբ հետևում է, որ լեոն Բ-ը ներկայացնում և ընդգծում էր իր կերտած թագավորութեան համահայկական բովանդակութիւնն ու նշանակութիւնը, իսկ Կիլիկիան և Իսաւրիան դիտում էր սոսկ որպէս իր ծրագրած ամբողջական Հայոց պետութեան նահանգներ: Ուստի լիովին համաձայն ենք Ա. Սուքիասյանի այն կարծիքին, որ լեոն Բ-ը «երազում էր հայկական բոլոր հողերն ազատագրել օտար տիրապետութիւնից և դրանք միավորել իր իշխանութեան ներքո: Հայաստանում և Փոքր Ասիայում ապրող բոլոր հայերին նա համարում էր Կիլիկիայի հայկական թագավորութեան հպատակներ»<sup>13</sup>:

Լեոն Բ-ը հատել է «Լեոն թագաւոր ամենայն Հայոց, կարողութեամբ Աստուծոյ» մակագրութեամբ արծաթե երկդրամ (մոտ 5,5 գրամ քաշով), որի բազմաթիւ օրինակներ պահպանվել են մինչև մեր օրերը»<sup>14</sup>:

XIII դարի սկզբի հայկական ձեռագիր հիշատակարաններում հանդիպում ենք լեոն Բ-ի մեկ այլ տիտղոսի՝ «զթագաւորն Հայոց Մեծաց զԼեոնն», «ի թագաւորութեան Հայոց Մեծաց քրիստոսապսակն Լեոնի (ընդգծումը տերն է— Շ. Ա.)»<sup>15</sup>:

Լեոն Բ-ի ծրագրած համահայկական թագավորութեան կերտման խորիմաստ քաղաքականութեան մասին խոսում են մի շարք այլ փաստեր: Այսպէս, Իննովկենտիոս Գ պապին 1199 թ. մայիսի 23-ին հղած նամակում լեոն Բ-ը իրեն անվանում է «Թագաւոր ամենայն Հայոց» (Rex omnium Armeniorum) և բնավ չի սքողում, որ իր նպատակն է Կիլիկիայի Հայոց արքայի մականի շուրջ համախմբել բոլոր հայերին. «...ի ձեռն շնորհաց լուսոյդ՝ փրկաբեր խրատութեան գերագոյ հօր մերոյ արքեպիսկոպոսին Մոզանտիոյ՝ հրահանգեալք և տեղեկացեալք, զամենայն առ ի Աստուծոյ յանձնեալն մեզ թագաւորութիւն ընդարձակ յոյժ եւ մեծատարած, և զհամօրէն Հայկազնեայս՝ որք այսր անդր ի սփիւռս հեռաւոր կողմանց: ի միութիւն սրբոյ Հռովմէական

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 239:

<sup>12</sup> Ղ. Ալիշան, Միսուան, էջ 470:

<sup>13</sup> Ա. Սուքիասյան, Կիլիկիայի հայկական պետութեան և իրավունքի պատմութիւն, Երևան, 1978, էջ 63:

<sup>14</sup> Steu P. Z. Bedoukian, Coinage of Cilician Armenia, New York, 1862, p. 131—133.

<sup>15</sup> Յիշատակարանք ձեռագրաց, կազմեց Գ. Հովսեփեան, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 758—759, 787:

Սկեզեցույ Աստուծոյ ողորմութեանն ներշնչելով, վերակոչել փափագեմք և ըզ-  
ձանամք» (Թարգմանությունը՝ Ղ. Ալիշանի)<sup>16</sup>:

Մայր Հայաստանի հոգևորականութեանը սիրաշահելու և նրա աջակ-  
ցությունն ստանալու համար Լեոն Բ-ը մի շարք հարցերում հետևողականո-  
րեն հաշվի էր առնում նրանց կարծիքը, առաջնութիւնը տալով նրանց դիրքո-  
րոշմանը: Այսպես, Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի մահից հետո Հայոց ընդ-  
հանրական կաթողիկոսութեան աթոռին հավակնում էին համարվալոր արք-  
եպիսկոպոսներ Ներսես Լամբրոնացին, Գրիգոր Ապիրատը, Հովհաննես Սսե-  
ցին և Անանիա Սեբաստացին<sup>17</sup>: Սակայն նրանց դեմ էին Մայր Հայաստանի  
հոգևորականները, որոնք առաջադրում էին երիտասարդ եպիսկոպոս Վահ-  
րամ-Գրիգորին՝ Ներսես Դ Շնորհալու եղբայր Վասիլի թոռանը: Եվ Մայր  
Հայաստանի հոգևորականութեան միասնութիւնն ու համակրանքը շահելու  
նպատակով Լեոն Բ-ի անդրդվելի կամքով Հոռոմէլայում Հայոց կաթողիկոս  
ընտրվեց Վահրամ-Գրիգոր Ե-ը (1193—1194 թթ.): Այդ նույն ժամանակ  
Մայր Հայաստանի բարձրագուս հոգևորականները, հատկապես՝ ազդեցիկ  
եպիսկոպոսներ Գրիգոր Տուտեորդին, Դավիթ Քոբայրեցին և Բարսեղ Անե-  
ցին, լրջորեն անհանգստացած էին Տարսնի արքեպիսկոպոս, Լեոն Բ-ի մեր-  
ձավոր խորհրդական և ատենադպիր Ներսես Լամբրոնացու արևմտամետ կրո-  
նա-դավանաբանական հայացքներից: Լեոն Բ-ն առանց տատանվելու ընդա-  
ռաջ զնաց արևելյան հոգևորականների պահանջներին և պալատից հեռաց-  
րեց Ներսես Լամբրոնացուն: Մայր Հայաստանի հոգևորականութեան նկատ-  
մամբ Լեոն Բ-ի խիստ բարյացակամ և խնամարկու վերաբերմունքի մասին  
է խոսում նաև Սամվել Սկևռացին. «...զոր ճշմարտապէս քան զբազումս  
առաւել սիրելով և անմոռաց բաղձանօք միշտ ի մտի ունելով արքայս Լեոն,  
զվանօրայս և զեկեղեցիս և զբարեձև կրօնաւորս, և զկարգս արևելեան կող-  
մանցն որ ի մեծ Հայք, որով հանապազ պարծէր առ ամենայն ազգս և լեզուս  
քրիստոնէից. և միշտ զովէր և տենէր իբրու հարազատ ժառանգ, և մա-  
նաւանդ քան զբազում տեղիս զմեծ և զհոշակաւոր երկնահաւասար սուրբ  
ուխտն զմայրավանքն զՀաղբատ, յորում կամէր անմոռաց արձանացուցանել  
զինքեանն յիշատակ բարի ի Քրիստոս նուիրօք և պատարագօք, վասն որոյ և  
ընդ այլոց թագաւորական ընծայից, զոր միշտ առաքէր, և զգիրքս զայս  
մեկնութեան Սաղմոսաց Դաւթի... առաքեալ՝ պարզեաց սուրբ ուխտին Հաղ-  
բատայ»<sup>18</sup>:

Մայր Հայաստանի բարձրագուս հոգևորականները և հյուսիս-արևելյան  
Հայաստանում իրենց ինքնավար իշխանութիւնը հաստատած Զաքարյան-  
ներն իրենց հերթին սիրահոգար ճանաչում էին Լեոն Բ-ի թագավորական  
իրավասութիւնը և մի շարք, հատկապես համազգային նշանակութիւն ունե-  
ցող հարցերում, դիմում նրա զերագույն վճռին: Այդ իմաստով խիստ ուշա-  
գրավ են Կիրակոս Գանձակեցու և Վարդան Արևելցու հաղորդած հետևյալ  
տեղեկութիւնները:

Նկարագրելով Զաքարյանների առաջնորդութեամբ հյուսիս-արևելյան  
Հայաստանի ազատագրումը և Խլաթի ամիրայի հետ կնքած հաշտութիւնը  
(1209/10 թթ.), Կիրակոս Գանձակեցին այնուհետև ավելացնում է, «նախա-  
տէին վիրք զհայք՝ ոչ ունել եկեղեցի ի ճանապարհի և անհաղորդ մնալ նոցա,  
և ոչ տօնել զտօնս վկայիցն աստուծոյ յիրաքանչիւր աւուր կատարման»<sup>19</sup>:

<sup>16</sup> Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 477:

<sup>17</sup> Տե՛ս Մ. Օրմանեան, նշվ. աշխ., հ. Ա, § 1029:

<sup>18</sup> Տե՛ս Սամուէլ Անեցի, նշվ. աշխ., էջ 241:

<sup>19</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 167:

Մխիթար Գոշը Զաքարյաններին միաժամանակ հուշում է, որ հայոց բանակում այս ծեսը վերականգնել «մեք ոչ կարեմք... առանց հրամանի կաթողիկոսին հայոց և թագաւորին Լեոնի»<sup>20</sup>։ Հայոց Մեծ սպարապետ և շահնշահ Զաքարեն հատուկ նամակով դիմում է Լեոն Բ արքային և Հայոց կաթողիկոսին՝ այդ հնավանդ ծիսական սովորույթը վերականգնելու թույլտվության խնդրանքով<sup>21</sup>։

Վարդան Արևելցիին Զաքարեի խնդրանքի մասին գրում է. «Իսկ Զաքարէ հըրայրն Իւանէի մնաց ի սեփհական հաւատն. սակայն կամեցաւ զտօն Տիրամօրն և զխաշին ի պատկեր աւուրն տօնել, և զճրագալոյցսն շլուծանել, և կրօնաւորաց միս շուտել, և կենդանոյն պատարագ մատուցանել. և վրանով պատարագել ի բացեայ՝ դպրօք և սարկաւազօք. վասն որոյ առաքեաց առ Լեոն»<sup>22</sup>։

Լեոն Բ արքան Սսում հատուկ եկեղեցական ժողով է հրավիրում նորընտիր կաթողիկոս Դավիթ Արքակազնեցու (1207—1211 թթ.) և Կիլիկիայի բարձրաստիճան հոգևորականների մասնակցությամբ, որտեղ ութ կետից բաղկացած մի կանոնագիր է կազմվում Զաքարեի ներկայացրած խնդրանքի վերաբերյալ և ուղարկվում Մայր Հայաստան<sup>23</sup>։

Հովհաննես Զ Սսեցի կաթողիկոսը (1203—1221 թթ.), որն այդ ժամանակ պաշտոնազրկվել էր, բայց դեռևս նստում էր Հոռմկլայում<sup>24</sup>, նույնպես դրական պատասխան է տալիս Զաքարեի խնդրանքին և Մինաս եպիսկոպոսի գլխավորությամբ մի պատվիրակություն ուղարկում Լոռի, որը Զաքարեին նվիրում է գմբեթագարդ եկեղեցածե վրան, մարմարյա սեղան և պատարագի սպասք<sup>25</sup>։

Հետաքրքրական է Դարանաղյաց գավառի սուրբ Գրիգոր վանքի Ավետարանի 1201 թ. մի հիշատակարան, որտեղ կարդում ենք. «Յամի վեցհարիւրորդի յիսնորդի թուականութեանս Հայոց (1201), ի թագաւորութեան մերոյ ազինս բարեպաշտ արեւային Լեւոնի, ի նահանգին Կիլիկիոյ... (ընդգծումը մերն է — Ղ. Ա.)»<sup>26</sup>։ Իսկ 1211 թ. Հաղպատի վանքում գրված մի ձեռագրի հիշատակարանում ասվում է. «...ի սուրբ ուխտս Հաղբատայ գծագրեցաւ ձեռամբ Յակովբայ յառաջնորդութեան տեան Յոհաննիսի սրբասրիի, ի թագաւորութեան Հայոց արեւտայինն կողման Լեւոնի քրիստոսասէր թագաւորի և ի սպարապետութեան Զաքարիայ Շահնշահի, յորոց յաւուրս ժամանակաց յոլովս կատարեաց Աստուած յաղթութիւն ի բազում տեղիս...»<sup>27</sup>։

Մայր Հայաստանում ապրող և ստեղծագործող գրիչը, նշելով իր գրքավածքի ժամանակը, նախապատվում և առաջադասում է Ամենայն Հայոց կաթողիկոս Հովհաննես Զ Սսեցուն և Հայոց թագավոր Լեոն Բ-ին, ապա միայն Զաքարե շահնշահին, և վերջիններին հաղթանակները բնավ չի զատում իրարից, այլ ընդհանրացնում և նվիրագործում է նրանց անունով։

Այսպիսով, սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունները միահամուռ հավաստում են, որ 1198 թ. Կիլիկիայում վերակերտված Հայոց թագավորությունը հավակնել է համահայկական իրավասության։ Դրա պերճա-

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 168։

<sup>21</sup> Նույն տեղում։

<sup>22</sup> Վարդան Արևելցի, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 138։

<sup>23</sup> Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 168—170։

<sup>24</sup> Տե՛ս Սմբատ Սպարապետ, նշվ. աշխ., էջ 215։

<sup>25</sup> Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 170—171։

<sup>26</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 18։

<sup>27</sup> Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, էջ 749։

խոս վկայություններն են ևսն Բ-ի վերոհիշյալ ձեռնարկումները: Սակայն Լե-  
վոն Բ Մեծագործի այս խորիմաստ և նպատակամղված քաղաքականությունը  
ներա՛մահից հետո չունեցավ իր սրամարանական շարունակությունը: Կիլիկիա-  
յի Հայոց թագավորության համահայկական իրավասության կայացմանը խոչ-  
ընդոտեցին ոչ միայն Հեթումյան արքայատան անհետևողական քաղաքակա-  
նությունն այդ արմատական հարցում, այլև հետագա ժամանակաշրջանում  
ստեղծված միջազգային բարդ և հարափոփոխ իրապայմանները:

**Ա. Մ. ԱՐՏԱՄՅԱՆ**—Общенациональная юрисдикция армянского царства, воссозданного в Киликии. Путем сравнительного анализа сведений, сохранившихся в армянских первоисточниках, делается следующий вывод: воссозданное в 1198 году в Киликийской Армении царство претендовало на общеармянскую юрисдикцию. В статье также исследована последовательная политика Левона II (1187—1219) по воплощению в жизнь данной программы.